Արձանագրություն N 7

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 29-ի

Օրակարգ

1. **<<Ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության արձանագրային որոշման ներկայացում**
2. **<<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա հանրապետական քարոզարշավի մասին**
3. **<<Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավում>> ծրագրի ներկայացում**
4. **Ելույթներ, մտքերի փոխանակում**

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ***(հանձնաժողովի նախագահ)***
Լ. Ղազարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Գ.Հայրապետյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչի օգնական (համաձայնությամբ)
Լ. Ահարոնյան	<<Կանանց ռեսուրսային կենտրոն>> հասարակական կազմակերպության համանախագահ (համաձայնությամբ)
Դ. Սարգսյան	<<Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ս. Գրիգորյան	ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի իրավաբանական բաժնի աշխատակից (համաձայնությամբ)
Մ. Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորիգի վարչության գլխավոր մասնագետ
Է. Վիրապյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Թ. Աբրահամյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կանանց հիմնահարցերի բաժնի կրտսեր մասնագետ

Ա.Մխիթարյան	Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի սոցիալական աջակցության բաժնի պետ
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***(հանձնաժողովի քարտուղար)***

Հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Ֆ. Բերիկյանը և ներկայացրեց օրակարգը: Մինչև օրակարգի հարցերին անդրադառնալը պարոն Բերիկյանը հանձնաժովի անդամներին ներկայացրեց աշխատանքային խմբի կողմից <<Ընտանեկան բռնության մասին>> ՀՀ օրենքի, ինչպես նաև <<Ոստիկանության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>>, <<ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին>>, <<ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն ու լրացումներ կատարելու մասին>> և <<ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքների նախագծերի լրամշակման աշխատանքները: Նա, մասնավորապես, անդրադարձավ հոկտեմբերի 12-ին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված <<Ընտանեկան բռնության մասին>> ՀՀ օրենքի նախագծի քննարկումների և նոյեմբերի 13-ին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված <<Ընտանեկան բռնության մասին>> ՀՀ օրենքի նախագծի հանրային լսումների ընթացքում շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից բարձրացված խնդիրներին: Պարոն Բերիկյանը վերոհիշյալ միջազգային կամակերպություններին հայտնեց իր գոհունակությունը ընձեռած աջակցության կապակցությամբ: Նա ներկաներին տեղեկացրեց, որ օրենքի նախագծի փաթեթը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Կառավարություն և այն տեղակայված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային կայքում՝ www.mss.am հասցեում:

Հանձնաժողովի անդամները իրենց մտահոգությունը հայտնեցին նախագծի, մասնավորապես, հիմնական օրնսգրքերում իրավական ակտերում առաջիկայում նախատեսվող փոփոխությունների կապակցությամբ, միևնույն ժամանակ նշեցին, որ կարճ ժամանակահատվածում աշխատանքային խմբի կողմից իրականացվել է բավականին մեծ աշխատանք:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ Ա.Թանաշյանը: Նա ներկայացրեց <<Հայաստանի Հանրապետության ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների տարեկան ծրագրին հավանություն տալու մասին>> ՀՀ Կառավարության արձանագրային որոշման նախագիծը և ծրագրում ներառված միջոցառումները, նշելով առավել նշանակալի ծրագրերը: Նա նշեց նաև, որ հանձնաժողովի անդամները կարող են ներկայացնել իրենց առաջարկները նախագծի կապակցությամբ, որից հետո այն սահմանված կարգով կներկայացի ՀՀ Կառավարություն:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցչի օգնական Գ.Հայրապետյանը: Նա նշեց, որ ՄԱԿ-ը յուրաքանչյուր տարի մշակում է 16-օրյակի միջոցառումների օրացույց, որը տեղադրված է http://www.genderbasedviolence.am ինտերնետային կայքէջում: Պարոն Գ.Հայրապետյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց 2012թ. քարոզարշավի շրջանակներում ՄԱԿ-ի կողմից նախատեսված միջոցառումները: Իրենց կամակերպությունների կողմից նախատեսված ծրագրերը ներկայացրեցին նաև <<Կանանց ռեսուրսային կենտրոն>> հասարակական կազմակերպության համանախագահ Լ. Ահարոնյանը և <<Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Դ. Սարգսյանը: Իրականացվելիք ծրագրերի մասին ամփոփ պատկերացում կազմելու նպատակով Ա.Թանաշյանն առաջարկեց, որ համապատասխան կառույցները հանձնաժողովին ներկայացնեն տեղեկատվություն <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա հանրապետական քարոզարշավի ընթացքում իրենց կազմակերպությունների կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի սոցիալական աջակցության բաժնի պետ Ա.Մխիթարյանը: Նա ներկայացրեց ԱՄՆ Միջազգային Զարգացման գրասենյակի աջակցությամբ իրականացվող <<Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավում>> ծրագիրը, որի նպատակն է նպաստել բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների բարելավմանն ու հզորացմանը, նպաստել գենդերային բռնության ենթարկված անձանց պաշտպանությանն ու նրանց տրամադրվող ծառայությունների առավել արդյունավետ կազմակերպմանը: Ա.Մխիթարյանը ներկայացրեց նաև Ծրագրի շրջանակներում նախատեսվող աշխատանքները, որոնք իրականացվելու են հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում, ինչպես նաև մարզերի մի շարք համայնքներում:

Ֆ.Բերիկյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովի անդամներին կտրամադրվի տեղեկատվություն <<Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավում>> ծրագրի, դրա ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Իգիտություն ընդունել Ա.Թանաշյանի և Ա.Մխիթարյանի հաղորդումները:
2. Հանձնարարել՝ հանձնաժողովի անդամներին մինչև 2012թ. դեկտեմբերի 7-ը ներկայացնել առաջարկություններ <<Հայաստանի Հանրապետության ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների տարեկան ծրագրին հավանություն տալու մասին>> ՀՀ Կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ:
3. Հանձնարարել՝ հանձնաժողովի անդամներին ներկայացնել տեղեկատվություն <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա հանրապետական քարոզարշավի ընթացքում իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**

/03.12.2012թ./